ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 18 » « մարտի » 2026թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Է.Միսակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Դպիրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ.Մինասյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան
Բացակայում է	
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Գ.Պետրոսյան

1. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով:

2. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1. «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի մարտի 18-ին, ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
Meteopress spol s.r.o.	pavel.chaloupka@meteopress.com	CZ 471 25 381	+420 775 577 159

4. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

4.1. Գնահատող հանձնաժողովի ներկա անդամները և քարտուղարը «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

5.1. Meteopress spol s.r.o.-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան.

5.1.1 Հավելված N 1-ում՝ Դիմում հայտարարության մեջ սխալ է գրված Դիմում հայտարարության անվանումը և առաջին պարբերության մեջ նշված ընթացակարգի ծածկագիրը,

5.1.2 Հավելված N 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ստորագրված չէ,

5.1.3 Լիազորագր մեջ սխալ է նշված պատվիրատուի անվանումը,

5.1.4 Հավելված N 2-ում՝ գնային առաջարկում սխալ է գրված գլխագիրը, արժեք սյունակի և ընդհանուր գինը սյունակի անվանումները, գնման առարկայի անվանումը լրացված չէ, արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակը ընդհանուր մեկ տողով տառերով կամ թվերով լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Է.Միսակյան)

6.1. Meteopress spol s.r.o.-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Է.Միսակյան)

7.1. Meteopress spol s.r.o.-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան.

7.1.1. Հավելված N 1-ում՝ Դիմում հայտարարության մեջ սխալ է գրված Դիմում հայտարարության անվանումը և առաջին պարբերության մեջ նշված ընթացակարգի ծածկագիրը,

7.1.2. Հավելված N 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ստորագրված չէ,

7.1.3. Լիազորագր մեջ սխալ է նշված պատվիրատուի անվանումը,

7.1.4. Հավելված N 2-ում՝ գնային առաջարկում սխալ է գրված գլխագիրը, արժեք սյունակի և ընդհանուր գինը սյունակի անվանումները, գնման առարկայի անվանումը լրացված չէ, արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակը ընդհանուր մեկ տողով տառերով կամ թվերով լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

հ/հ	Գնման առարկայի՝ անվանումը	Meteopress spol s.r.o.	
		Գինն առանց ԱԱՀ	գինը
1	Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայան	-	679 316 512

8.1. Meteopress spol s.r.o.-ի կողմից մրցույթի գնային առաջարկը կազմված է հրավերով սահմանված պահանջներին և պայմաններին անհամապատասխան.

8.1.1. Գնային առաջարկում սխալ է գրված գլխագիրը, արժեք սյունակի և ընդհանուր գինը սյունակի անվանումները, գնման առարկայի անվանումը լրացված չէ, արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակը ընդհանուր մեկ տողով տառերով կամ թվերով լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների մասին

9.1. Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

10. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու պահանջներին բավարարելու մասին

10.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ցուցակները և արձանագրել է, որ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցը վերոնշյալ ցուցակներում ընդգրկված չեն:

11. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

11.1. «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-26/04» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ.

11.1.1. 2026 թվականի մարտի 03-ին ժամը 03:17:28-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 4-ին ժամը 10:30-ին տրամադրվել է պարզաբանում,

11.1.2. 2026 թվականի մարտի 10-ին ժամը 13:10:25-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 11-ին ժամը 11:30-ին տրամադրվել է պարզաբանումը,

11.1.3. 2026 թվականի մարտի 10-ին ժամը 15:25:10-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 11-ին ժամը 11:30-ին տրամադրվել է պարզաբանումը,

11.1.4. 2026 թվականի մարտի 11-ին ժամը 16:09:22-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 12-ին ժամը 14:15-ին տրամադրվել է պարզաբանումը,

11.1.5. 2026 թվականի մարտի 11-ին ժամը 18:06:54-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 12-ին ժամը 14:30-ին տրամադրվել է պարզաբանումը,

11.1.6. 2026 թվականի մարտի 12-ին ժամը 16:09:01-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 13-ին ժամը 10:15-ին տրամադրվել է պարզաբանումը:

12. Հանձնաժողովը որոշեց՝

(Է.Միսակյան)

12.1. «Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Հրավերի 1-ին մասի 8.2 կետը՝ Meteopress spol s.r.o.-ի ներկայացրած հայտը մերժել և շտկման պահանջ չներկայացնել, քանի որ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

12.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

12.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

13. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) _____ Է.Միսակյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Ա.Դպիրյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Լ.Սինանյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Գ.Մինասյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Լ.Զոհրաբյան